ՀՀ ՊԵՏԱԿԱՆ
ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ
ԿՈՄԻՏԵ

ՈՒՂԵՑՈՒՅՑ

ՀՀ ՍԱՀՄԱՆԸ ՀԱՏՈՂ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՀԱՄԱՐ

Տեղեկատվություն՝ անձնական օգտագործման ապրանքների կատեգորիաներին չդասվող ապրանքների, արգելքների ու սահմանափակումների պահպանմամբ ՀՀ ներմուծվող կամ ՀՀ-ից արտահանվող անձնական օգտագործման ապրանքների մասին

2024

Ուղեցույցի նպատակն է՝ տրամադրել տեղեկատվություն այն ապրանքների մասին, որոնք չեն հանդիսանում անձնական օգտագործման ապրանքներ, հետևաբար՝ չեն կարող ֆիզիկական անձի կողմից տեղափոխվել մաքսային օրենսդրությամբ անձնական օգտագործման ապրանքների համար նախատեսված կարգավորումների համաձայն, ինչպես նաև՝ ներկայացնել տեղեկատվություն ՀՀ սահմանով տեղափոխման համար արգելված կամ սահմանափակված անձնական օգտագործման ապրանքների մասին.

ԻՐԱԶԵԿ ԼԻՆԵԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԸ ՀԱՏԵԼԻՍ

Ուշադրություն

Հայաստանի Հանրապետության սահմանով ֆիզիկական անձանց կողմից ապրանքների տեղափոխմանը վերաբերող կարգավորումներին ավելի մանրամասն կարող եք ծանոթանալ այցելելով ՀՀ Պետական եկամուտների կոմիտեի պաշտոնական կայքէջ՝
https://src.am/am/getMenusContents/266:

Հնարավոր է անցում կատարել նաև հետևյալ QR կոդով՝

1. Ո՞ր ապրանքները չեն համարվում անձնական օգտագործման ապրանքներ և չեն կարող ֆիզիկական անձանց կողմից տեղափոխվել մաքսային օրենսդրությամբ անձնական օգտագործման ապրանքների համար նախատեսված կարգավորումների համաձայն.

Անձնական օգտագործման չեն համարվում Եվրասիական տնտեսական հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողովի)՝ 20. 12. 2017թ-ի «Անձնական օգտագործման ապրանքների հետ կապված առանձին հարցերի մասին» թիվ 107 որոշման 6-րդ հավելվածի ցանկում ներառված՝ անձնական օգտագործման ապրանքների կատեգորիաներին չդասվող ապրանքները: Մասնավորապես՝

- Թառափազգի ձկնատեսակների ձկնկիթ՝ 250 գ-ից ավելի քանակությամբ:

- Ձուկ, խեցգետնակերպեր (կենդանի, պաղեցրած, սառեցրած)՝ 5 կգ-ից ավելի քանակությամբ:

- 5 լիտրից ավելի ընդհանուր ծավալով, 0,5% ծավալային բաժնից ավելի խտությամբ էթիլային սպիրտ, ալկոհոլային խմիչքներ, որոնք ներմուծվում են 18 տարին լրացած անձի կողմից:

- 18 տարին չլրացած անձի կողմից ներմուծվող էթիլ սպիրտ, 0,5%-ից ավելի սպիրտի պարունակությամբ ալկոհոլային խմիչքներ:

- Ծխախոտ, ծխախոտային արտադրատեսակներ, ծխախոտ, նիկոտին պարունակող և տաքացման կամ այլ եղանակների օգնությամբ (առանց այրման) ներշնչելու համար նախատեսված արտադրանք՝ 200-ից ավելի սիգարետի կամ 50 սիգարի (սիգարիլլայի) կամ տաքացվող ծխախոտով 200 արտադրատեսակների («ստիկների») կամ 250 գ ծխախոտի քանակությամբ կամ 250 գրամից ոչ ավելի ընդհանուր քաշով արտադրատեսակների տեսականի, որոնք ներմուծվում են 18 տարին լրացած անձի կողմից:
- Ծխախոտ, ծխախոտային արտադրատեսակներ, ծխախոտ, նիկոտին պարունակող և տաքացման կամ այլ եղանակների օգնությամբ (առանց այրման) ներշնչելու համար նախատեսված արտադրանք, որոնք ներմուծվում են 18 տարին չլրացած անձի կողմից:

- Բնական ալմաստներ (բացառությամբ ԵԱՏՄ մաքսային տարածքից արտահանվող՝ 75 հազար ԱՄՆ դոլարից ոչ ավելի արժողությամբ ադամանդների):

- Ավտոտրանսպորտային և մոտոտրանսպորտային միջոցներ և ավտոտրանսպորտային և մոտոտրանսպորտային միջոցների կցորդներ, որոնք ներառված չեն Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2017 թվականի հունիսի 30-ի թիվ 74 որոշմամբ հաստատված՝ անձնական օգտագործման տրանսպորտային միջոցներ հանդիսացող ավտոտրանսպորտային և մոտոտրանսպորտային միջոցների ու ավտոտրանսպորտային և մոտոտրանսպորտային միջոցների կցորդների առանձին տեսակների ցանկում:

- Տրանսպորտային միջոցների ներքին այրման շարժիչներ (բացառությամբ նավակի կախովի շարժիչների):

Ուշադրություն

Հանձնաժողովի 20. 12. 2017թ-ի ‹‹Անձնական օգտագործման ապրանքների հետ կապված առանձին հարցերի մասին›› թիվ 107 որոշման 6-րդ հավելվածի ամբողջական ցանկը տես հղումով կամ QR կոդով՝

https://docs.eaeunion.org/docs/ru-ru/0044719/cncd_19032018_107

Ուշադրություն.

- Անհրաժեշտ է իմանալ նաև, որ անձնական չեն կարող համարվել ձեռնարկատիրական գործունեության իրականացման հետ կապված ապրանքները:
- Սույն կարգավորումների իմաստով՝ «ալկոհոլային խմիչքներ՝ 0,5 տոկոսից ավելի ալկոհոլային կոնցենտրացիայով» հասկացությունը պետք է մեկնաբանել որպես՝ ԵՍՏՄ ԱՏԳ ԱԱ 2203 00 - 2206 00 և 2208 ապրանքային դիրքերում ներառված ալկոհոլային խմիչքներ՝ բացառությամբ էթիլ սպիրտի և կվասի:

2. Ի՞նչ է նշանակում մաքսային օրենսդրության իմաստով արգելքներ և սահմանափակումներ հասկացությունը.

Համաձայն ԵԱՏՄ մաքսային օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք)՝ «արգելքներ ու սահմանափակումներ» հասկացությունը մեկնաբանվում է որպես՝ Միության մաքսային սահմանով տեղափոխվող ապրանքների նկատմամբ կիրառվող ոչ սակագնային կարգավորման միջոցներ, այդ թվում՝ ԵԱՏՄ անդամ պետության կողմից միակողմանիորեն սահմանվող, տեխնիկական կարգավորման միջոցներ, սանիտարական, անասնաբուժասանիտարական և կարանտինային բուսասանիտարական միջոցառումներ, արտահանման վերահսկողության միջոցներ, այդ թվում՝ ռազմական նշանակության արտադրանքի նկատմամբ կիրառվող միջոցներ, և օրենսդրությանը համապատասխան սահմանված ճառագայթային անվտանգության պահանջներ.

3. Արդյո՞ք արգելքների և սահմանափակումների պահպանումը՝ համարվում է մաքսային մարմնի կողմից ապրանքների բացթողումը իրականացնելու պայման.

Այո, արգելքների և սահմանափակումների պահպանումը՝ Օրենսգրքի 7-րդ հոդվածին համապատասխան, հանդիսանում է ***մաքսային հայտարարագրման ենթակա*** անձնական օգտագործման ապրանքների, Հայաստանի Հանրապետություն ներմուծելու կամ Հայաստանի Հանրապետությունից արտահանելու համար, մաքսային մարմինների կողմից բացթողումն իրականացնելու պայման:

4. Ֆիզիկական անձի կողմից բուսասանիտարական հսկողության ենթակա ապրանքների ներմուծման ի՞նչ արգելքներ և սահմանափակումներ են գործում.

Առանց բուսասանիտարական հավաստագրի թույլատրվում է ՀՀ տարածք ներմուծել բարձր բուսասանիտարական ռիսկայնության՝ մինչև 5 կիլոգրամ ենթակարանտինային ապրանքներ (բացառությամբ՝ սերմային և արտադրական կարտոֆիլի, աճեցման և գիտահետազոտական նպատակով ներմուծվող նյութերի), ինչպես նաև մինչև 1 հատ դդում, սեխ և ձմերուկ, մինչև 3 փունջ ծաղիկ:

Ուշադրություն.

Փունջ է համարվում միասին հավաքված՝ կտրված ծաղիկները, կոկոնները, տերևները, խոտերը և առանց ծաղիկների և կոկոնների բույսերի այլ մասերը՝ թարմ կամ չորացված, որոնց ընդհանուր թիվը չի գերազանցում 15 հատը:

5. Ֆիզիկական անձի կողմից անասնաբուժասանիտարական հսկողության ենթակա ապրանքների ներմուծման ի՞նչ արգելքներ և սահմանափակումներ են գործում.

Առանց արտահանող երկրի անասնաբուժասանիտարական հավաստագրի և թույլտվության կարող է ՀՀ տարածք ներմուծվել՝ մինչև 5 կիլոգրամ կենդանական ծագման պատրաստի արտադրանք, եթե առկա է գործարանային փաթեթավորում: Թույլատրվում է անձնական օգտագործման նպատակով, առանց հատուկ թույլտվության, մինչև 2 գլուխ շան և կատվի տեղափոխումը, եթե ուղեկցող միջազգային անձնագրում առկա է լիազոր մարմնի կողմից կլինիկական հետազոտության վերաբերյալ կատարված նշում՝ որը կատարվել է տեղափոխմանը նախորդող 14 օրվա ընթացքում:

6. Ֆիզիկական անձի կողմից Հայաստանի Հանրապետություն դեղերի ներմուծման ի՞նչ արգելքներ և սահմանափակումներ են գործում.

Օտարերկրյա պետությունից ժամանող ֆիզիկական անձի բուժման կուրսի կամ անձնական օգտագործման համար, առանց հավաստագրի, թույլատրվում է ներմուծել Հայաստանի Հանրապետությունում գրանցված կամ չգրանցված դեղեր՝ մինչև 10 անվանում, յուրաքանչյուրից՝ երեքական սպառողական փաթեթ քանակով, եթե դեղի նշանակման վերաբերյալ փաստաթղթերով (դեղատոմս կամ քաղվածք հիվանդության պատմագրից կամ բժշկի ստորագրությամբ այլ փաստաթուղթ) հիմնավորված չէ բուժման կուրսի համար անհրաժեշտ ավելի մեծ քանակը:

7. Ի՞նչ առանձնահատկություններ են սահմանված Ֆիզիկական անձի կողմից թմրամիջոցներ կամ հոգեմետ նյութեր պարունակող դեղերի տեղափոխման համար.

Հայաստանի Հանրապետության սահմանը հատող քաղաքացիները կրում են պարտավորություն մաքսային անցակետում իրենց մոտ առկա՝ բժշկի կողմից նշանակված թմրամիջոցների կամ հոգեմետ նյութերի քանակի և ձեռքբերման օրինականության վերաբերյալ հայտարարագիր լրացնելու և մաքսային մարմնին ներկայացնելու մասով:

Թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութեր պարունակող դեղերի ներմուծումն ու արտահանումն իրականացվում են առանց մաքսային մարմնին լիցենզիա ներկայացնելու՝ բժշկական ցուցումների մասին վկայող համապատասխան բժշկական փաստաթղթերի հիման վրա, որտեղ նշվում է ապրանքի անվանումը և քանակը: Նշված բժշկական փաստաթղթերը կամ վերջիններիս վավերացված պատճենները կազմվում են հայերեն կամ մաքսային մարմնին կարող են ներկայացվել դրանց՝ օտար լեզվից թարգմանված և նոտարական վավերացում ստացած պատճենները: Հայաստանի Հանրապետություն կարող են ներմուծվել միայն Հայաստանի Հանրապետությունում պետական գրանցում ունեցող թմրադեղեր և հոգեմետ դեղեր:

8. Ֆիզիկական անձանց կողմից մարդու օրգանների և հյուսվածքների, արյան և դրա բաղադրիչների ներմուծման և (կամ) արտահանման ի՞նչ արգելքներ և սահմանափակումներ են գործում.

Արգելվում է ֆիզիկական անձանց կողմից մարդու օրգանների և հյուսվածքների, արյան և դրա բաղադրիչների ներմուծումը և (կամ) արտահանումը, բացառությամբ, որպես անձնական օգտագործման ապրանքներ մարդու կենսաբանական նյութերի նմուշների ներմուծումը:

Ուշադրություն.

Ֆիզիկական անձանց կողմից մարդու կենսաբանական նյութերի նմուշների, որպես անձնական օգտագործման ապրանքների ներմուծումը և (կամ) արտահանումն իրականացվում է ՀՀ առողջապահության նախարարության եզրակացության (թույլատվական փաստաթղթի) առկայության դեպքում:

9. Ֆիզիկական անձանց կողմից, որպես անձնական օգտագործման ապրանք վայրի կենդանիների և առանձին վայրի բույսերի և վայրի բույսերից դեղաբուսական հումքի, ՀՀ-ից արտահանման ինչպիսի՞ արգելքներ և սահմանափակումներ են գործում.

Վայրի կենդանիների, առանձին վայրի բույսերի և վայրի բույսերից դեղաբուսական հումքի արտահանումը ֆիզիկական անձանց կողմից, իրականացվում է ՀՀ շրջակա միջավայրի նախարարության եզրակացության (թույլատվական փաստաթղթի) առկայության դեպքում, եզրակացություն չի պահանջվում ֆիզիկական անձի կողմից որպես անձնական օգտագործման ապրանք առանձին վայրի բույսերի և վայրի բույսերից դեղաբուսական հումքի՝ յուրաքանչյուր նմուշի 3 օրինակից ոչ ավելի քանակով արտահանման դեպքում, ինչպես նաև 1կգ-ից ոչ ավելի սոճու՝ կեղևով ընկույզի, կամ 0,5 կգ-ից ոչ ավելի քաշով առանց կեղևի՝ սոճու ընկույզի արտահանման դեպքում:

10. Ֆիզիկական անձի կողմից՝ Հայաստանի Հանրապետությունից մշակութային արժեքների արտահանման ի՞նչ արգելքներ և սահմանափակումներ են գործում.

Ֆիզիկական անձանց կողմից, որպես անձնական օգտագործման ապրանքներ՝ մշակութային արժեքների արտահանումը կամ ժամանակավոր արտահանումը իրականացվում է ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության եզրակացության (թույլատրող փաստաթղթի) առկայության դեպքում:

11. Ֆիզիկական անձի կողմից Հայաստանի Հանրապետություն որպես անձնական օգտագործման ապրանք ծածկագրային (կրիպտոգրաֆիկական) միջոցների ներմուծման կամ արտահանման ինչպիսի՞ արգելքներ և սահմանափակումներ են գործում.

➢ Ֆիզիկական անձանց կողմից որպես անձնական օգտագործման ապրանքներ Հանձնաժողովի կոլեգիայի 21. 04. 2015թ-ի «Ոչ սակագնային կարգավորման միջոցների մասին» թիվ 30 որոշմամբ հաստատված «Միության տարածք ծածկագրային (կրիպտոգրաֆիկական) միջոցների Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածք ներմուծման և Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածքից արտահանման» կարգի 5-րդ հավելվածի (այսուհետ՝ 5-րդ հավելված) ցանկում ներառված գաղտնագրման (կրիպտոգրաֆիկ) միջոցների ներմուծումը կամ արտահանումը, ֆիզիկական անձի կողմից իրականացվում է առանց մաքսային մարմնին եզրակացություն (թույլտվություն) կամ ծանուցման տեղեկատվություն ներկայացնելու:

5-րդ հավելվածով հաստատված ցանկը, հասանելի է հետևյալ հղումով՝
http://www.eurasiancommission.org/ru/act/trade/catr/nontariff/Documents/EP.pdf/pr9.pdf

➢ Եթե գաղտնագրման (կրիպտոգրաֆիկ) միջոցները ներառված չեն 5-րդ հավելվածով նախատեսված ցանկում, ապա դրանց ներմուծումը կամ արտահանումն իրականացվում է ֆիզիկական անձանց կողմից այդպիսի ապրանքների վերաբերյալ ծանուցման մասին տեղեկատվության առկայության դեպքում:

➢ Ֆիզիկական անձանց կողմից որպես անձնական օգտագործման ապրանք՝ 5-րդ հավելվածով նախատեսված ցանկում չներառված գաղտնագրման (կրիպտոգրաֆիկ) միջոցների ներմուծումը կամ արտահանումը, որոնց վերաբերյալ ծանուցման տեղեկատվություն առկա չի, արգելվում է:

Ուշադրություն.

5-րդ հավելվածով նախատեսված գաղտնագրման (կրիպտոգրաֆիկ) միջոցների ցանկում են ընդգրկված, օրինակ՝

Համակարգիչները (անհատական համակարգիչներ, բոլորը մեկում համակարգիչներ, գրպանային համակարգիչներ, նեթբուքներ, դյուրակիր համակարգիչներ, պլանշետային համակարգիչներ, գրպանի խաղային կոնսուլներ, սմարթֆոններ, էլեկտրոնային սարքեր «խելացի ժամացույցներ, հեծանիվ համակարգիչները և այլն), դրանց էլեկտրոնային մոդուլները և մասերը, բջջային կապի ցանցերի և դրանց աքսեսուարների համար նախատեսված հեռախոսային սարքերը, բացառությամբ՝ մասնագիտացված հեռախոսների և աքսեսուարների, որոնք նախատեսված են բջջային գաղտնագրված կապի ցանցերի համար (կարող են գաղտնագրել միջանցիկ), ռադիոնավիգացիոն ընդունիչներ, հեռակառավարման սարքավորումներ և դրանց մասերը և այլն. . . :



12. Ֆիզիկական անձի կողմից Հայաստանի Հանրապետությունից, որպես անձնական օգտագործման ապրանք, հանքագիտության և հնէաբանության հավաքածուների և հավաքածուների առարկաների, բրածո կենդանիների ոսկորների արտահանման ինչպիսի՞ արգելքներ և սահմանափակումներ են գործում.

ՀՀ տարածքից՝ հանքագիտության և հնէաբանության հավաքածուների և հավաքածուների առարկաների, բրածո կենդանիների ոսկորների արտահանումը ֆիզիկական անձի կողմից՝ որպես անձնական օգտագործման ապրանք, կարող է իրականացվել ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության եզրակացության (թույլատվական փաստաթղթի) առկայության դեպքում:

13. Ֆիզիկական անձի կողմից Հայաստանի Հանրապետության տարածք, որպես անձնական օգտագործման ապրանք, թանկարժեք քարերի ներմուծման և արտահանման ինչպիսի՞ արգելքներ և սահմանափակումներ են գործում.

Անհրաժեշտ է իմանալ, որ անձնական օգտագործման հանդիսացող (դիտարկվող) թանկարժեք քարերի ներմուծման կամ արտահանման դեպքում հատուկ թույլտվություն չի պահանջվում:

Ուշադրություն.

Բնական ալմաստները (բացառությամբ ԵԱՏՄ մաքսային տարածքից արտահանվող՝ 75 հազար ԱՄՆ դոլարից ոչ ավելի արժողությամբ ադամանդների) անձնական օգտագործման չեն համարվում:

14. Ֆիզիկական անձի կողմից Հայաստանի Հանրապետության տարածք, որպես անձնական օգտագործման ապրանք, թանկարժեք մետաղների ներմուծման և արտահանման ինչպիսի՞ արգելքներ և սահմանափակումներ են գործում.

Ֆիզիկական անձի կողմից Հայաստանի Հանրապետություն ներմուծվող կամ Հայաստանի Հանրապետությունից արտահանվող անձնական օգտագործման ապրանք հանդիսացող (դիտարկվող) թանկարժեք մետաղների նկատմամբ թանկարժեք մետաղների տեղափոխման համար օրենսդրությամբ նախատեսված թույլատվական փաստաթղթերի ներկայացման պահանջը չի տարածվում:

15. Ֆիզիկական անձի կողմից Հայաստանի Հանրապետության տարածք, որպես անձնական օգտագործման ապրանք, ռադիոէլեկտրոնային և (կամ) քաղաքացիական օգտագործման բարձր հաճախականության սարքերի տեղափոխման դեպքում ինչպիսի՞ արգելքներ և սահմանափակումներ են գործում.

Ֆիզիկական անձանց կողմից որպես անձնական օգտագործման ապրանքներ միության մաքսային տարածք՝ նախկինում ժամանակավորապես արտահանված՝ ռադիոէլեկտրոնային սարքավորումների և (կամ) բարձր հաճախականության սարքերի հետադարձ ներմուծումը, իրականացվում է՝ նշված ռադիոէլեկտրոնային սարքավորումների և (կամ) բարձր հաճախականության սարքերի արտահանման ժամանակ կազմված ուղևորային մաքսային հայտարարագիրը մաքսային մարմնին ներկայացնելու դեպքում, որը պարունակում է դրանց նույնականացման հատկանիշները (անունը, մոդելը և ռադիոհաճախականության գոտին):

Ֆիզիկական անձանց կողմից, որպես անձնական օգտագործման ապրանքներ, միասնական ռեեստրում կամ Հանձնաժողովի կոլեգիայի 21. 04. 2015թ-ի «Ոչ սակագնային կարգավորման միջոցների մասին» թիվ 30 որոշմամբ հաստատված «Ռադիոէլեկտրոնային և (կամ) քաղաքացիական օգտագործման բարձր հաճախականության սարքերի, այդ թվում՝ ներկառուցված կամ այլ ապրանքների կազմի մեջ մտնող, Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածք ներմուծման» կարգի 2-րդ հավելվածով նախատեսված ցանկում ընդգրկված ռադիոէլեկտրոնային սարքավորումների և (կամ) բարձր հաճախականության սարքերի ներմուծումն, իրականացվում է առանց մաքսային մարմնին եզրակացություն (թույլատվական փաստաթուղթ) և ուղևորային մաքսային հայտարարագիր ներկայացնելու:

Ուշադրություն.

Ցանկում ներառված ապրանքներին մանրամասն կարելի է ծանոթանալ հետևյալ հասցեով՝

http://www.eurasiancommission.org/ru/act/trade/catr/nontariff/Documents/EP.pdf/PR15.pdf

16. Հայաստանի Հանրապետության տարածք ֆիզիկական անձի կողմից, որպես անձնական օգտագործման ապրանք, զենքի ներմուծման կամ արտահանման ինչպիսի՞ արգելքներ և սահմանափակումներ են գործում.

Ֆիզիկական անձի կողմից անձնական օգտագործման զենքը ներմուծվում կամ արտահանվում է ՀՀ ոստիկանության տրամադրած եզրակացության (թույլատվական փաստաթղթի) առկայության դեպքում:

17. Հանձնաժողովի կոլեգիայի 21. 04. 2015թ. «Ոչ սակագնային կարգավորման միջոցների մասին» թիվ 30 որոշման համաձայն՝ ֆիզիկական անձանց կողմից, որպես անձնական օգտագործման ապրանք, արգելված է.

- Հանքային հումքի արտահանումը;
- Օզոնային շերտը քայքայող նյութերի ներմուծումը և (կամ) արտահանումը;
- Բույսերի պաշտպանության միջոցների (պեստիցիդներ) ներմուծումը;
- Վտանգավոր թափոնների ներմուծումը և (կամ) արտահանումը;
- Թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութեր և դրանց պրեկուրսորներ չհամարվող թունավոր նյութերի ներմուծումը;
- Գաղտնի տեղեկատվության ստացման համար նախատեսված հատուկ տեխնիկական միջոցների՝ ներմուծումը և (կամ) արտահանումը;
- Ընդերքի մասին տեղեկատվության արտահանումը;
- Լաբորատոր հետազոտություններում, ինչպես նաև, որպես էտալոնային ստանդարտ օգտագործման համար նախատեսված բույսերի պաշտպանական միջոցների և այլ կայուն օրգանական աղտոտիչների ներմուծումը;
- Ջրային կենսաբանական ռեսուրսների արդյունահանման (որսի) համար սարքավորումների ներմուծումը;
- Տպագիր, տեսալսողական և այլ կրիչների վրա գտնվող՝ արգելված տեղեկատվության ներմուծումը և (կամ) արտահանումը:

Անհրաժեշտ է իմանալ նաև, որ.

Անհրաժեշտ է իմանալ նաև, որ Հայաստանի Հանրապետության սահմանով տեղափոխման սահմանափակումներ են գործում (այդ թվում՝ այդպիսի ապրանքները Եվրասիական տնտեսական միության այլ անդամ պետության տարածք տեղափոխելու դեպքում) նաև այնպիսի ապրանքների նկատմամբ, որոնք հանդիսանում են երկակի կամ ռազմական նշանակության ապրանքներ (այսինքն՝ հսկվող ապրանքներ), ինչպես նաև Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության տեսանկյունից զգայուն այն ապրանքների նկատմամբ, որոնք որոշակի վերափոխման արդյունքում կարող են հանդիսանալ հսկվող ապրանքներ:

Երկակի նշանակության ապրանքներ հասկացությունը ենթադրում է՝ յուրաքանչյուր տեսակի գույք, որ կիրառվում է քաղաքացիական նպատակների համար և իրենց բնույթին ու հատկություններին համապատասխան՝ կարող է օգտագործվել նաև ռազմական նպատակներով, ներառյալ՝ զանգվածային ոչնչացման զենքի և դրա փոխադրման միջոցների ստեղծման համար.

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ.

Ֆիզիկական անձի մոտ առկա, մաքսային մարմնի կողմից, որպես անձնական օգտագործման չդիտարկվող, կամ էլ Հանձնաժողովի կողմից անձնական օգտագործման ապրանքների շարքին չդասվող ապրանքների կատեգորիաների նկատմամբ ֆիզիկական անձանց անձնական օգտագործման ապրանքների տեղափոխմանը վերաբերող կարգավորումները (այդ թվում՝ ՀՀ սահմանով արգելքների և սահմանափակումների պահպանման մասով ֆիզիկական անձանց համար սահմանված առանձնահատկությունները) կիրառելի չեն, և այդ ապրանքները ենթակա են Հայաստանի Հանրապետության սահմանով տեղափոխման՝ Օրենսգրքի մյուս գլուխներով սահմանված կարգով և պայմաններով:

ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ

https://www.facebook.com/petekamutner/

https://www.instagram.com/src_armenia/

https://twitter.com/petekamutner

https://www.src.am/am